ԹԱԳԱՒՈՐԻ ԺԱՄԱՆԱԿ ՇԻՆՈՒԵՑԱՒ ԵՐԱՆՈՒՀԻ ՏԻԿՆՈՋ ԶԱՊԵԼԻՆ ՑԵՍՊՈՆԻՈՅԻ ՊԱՏԵՐԱԶՄԷՆ ՎԵՐՋԸ ՑԱՂԹԱՆԱԿ ԵԼՆԱԼՈՎ. ԶԶ (1257)։ Եւ 'ի Ներքոյ արձանագրութեանս զինադրոշմ, այսինքն նիզակք և դրոշք և 'ի միջի նոցա խոյր։

Ցեսպոնիոնն է անուն քաղաքի, զոր Արաբացիք կոչեն Ցեսպէն, եւ 'ի Ս. Գիրս Եսերոն. էր 'ի հնումն արքայանիստ քաղաք Սեհոնի թագաւորին Ամորհացւոց. Գէրթ Թ.ուոց. 21. 25։ Յայնկոյս Յորդանանու յարեւելից չղթայ ինչ լերանց ձգեալ 'ի հիւսիսոյ, արեւմտից հարաւոյ, զոր Արաբացիք կոչեն Պալդայ, ուր էին յառաջագոյն մեծաշէն և փառաւոր քաղաքք, Գերասան, Ճարաշ. Ամմոնի, Ամման. եւ այլք, այժմ ամենեքին են աւերակ եւ անմարդի բաց 'ի Բերեքայ և 'ի Սալթէ. յայսոսիկ լերինս թափառին բազմաթիւ վրանաշէս արաբք, բաժանեալ 'ի ցեղս ցեղս։ Ի քաղաքն Ամմոնի ցարդ երեւին աւերակք նախնական շինուածոց, ամփիթէատրոնի և այլոց, արձանագիր յունական վերտառութեամբ 'ի վերայ անկեալ քարանց. ձկնաւէտ դետակն, որ անցանէ 'ի ձորակէն, յերկուս բաժանէ զքաղաքն և միաւորէ կամրջաւն։

Զայսոսիկ քաղաքս և զամրոցս մինչ 'ի Բերեք, առեալ էր Հեթմոյ արքային օգնութեամբ Թաթարաց, որպէս գրէ նա ինքն Վարդան ականատես, և զայնս պահանջէր Սուլթան Եգիպտոսի Փնտուդտար յետ առման Դամասկոսի, իբր նահանգ նորին, որոց վասն եղեւ աւերումն Կիլիկիոյ, գերութիւն Լեւոնի եւ մահ Թորոսի արքայորդւոց։ Յետ մնալոյ 'ի ձեռս Հեթմոյ ամս իբրեւ 7. առին դարձեալ Եգիպտացիք (1264).

Բերէք քաղաք է յայնկոյս Յորդանանու յարեւելից հարաւոյ Երուսաղէմի 'ի պարս նոյն լերանց, ուր էին յառաջագոյն հատուածք 'ի ժողովրդոցն Հայոց եւ եկեղեցի նուիրեալ յանուն Ս. Գէորգայ. որպէս յայտ առնէ յիշատակարանն ձեռագիր Յայսմաւուրի յիշատակ արարեալ եկեղեցւոյն Բերեքայ Լեւոնի Դ. արքային Կիլիկիոյ 'ի թուին Հայոց ՉԿԹ. (1320). Նոյնպէս և գիրքն կոչեցեալ Հարանց վարք։ Իսկ 'ի յետին ժամանակս ապրեալքն 'ի սրոյ թշնամեաց ժողովուրդք Հայոց, ոմանք ցրուեցան